## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 յուլիսի: Հրամայված է Թիֆլիսի Նահանգի Բօրչալուի գաւառը առանձին պրիստաւութիւն դարձնել:

ՓԱՐԻԶ, 4 յուլիսի: Պառագամաւորների ժողովի նիստերը փակված են:

Կ. ՊՕԼԻՍ, 4 յուլիսի: Հայգիպտ յանձնեց Բ. Դրանը պետութիւնների ընդհանուր գրութիւնը Բերլինի կոնգրեսնոյսյի վճռի հետ:

ՍԻՄԼԱ, 4 յուլիսի: Երբ Կանդահարի նահանգապետ Նիր-Ալի հրամայեց իր զօրքերին յետ քաշվել գեպի Քիրչկի, նրա բոլոր հետևակ զօրքերը փախան, վերցնելով իրանց հետ թնդանօթներ, հրացաններ և պատերազմական պաշարներ: Անգլիական զօրաստիները, որի բանակը Քիրչկիի մօտ էր, յարձակվեցաւ փախստականների վրա, յրվեց նրանց, 200 մարդ սպանեց, խլեց թնդանօթները և պաշարները: Նիր-Ալիի հետևակազօրքը և բոլոր օժիտները հաւատարիմ մնացին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յուլիսի: Լօնդօնից սացված հեռագիրը յուլիսի 2-ից հազորդից, որ մարիից 9գնդ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ: Մեր տեղեկութիւնների համեմատ այդ լուրը անհիմն է: 9գնդին Ս. Պետերբուրգում շուտ չեն սպասում:

ԱՔԵՆԴ, 5 յուլիսի: Աչքոյ յունական կառավարութիւնը յանձնված է պետութիւնների ընդհանուր գրութիւնը, որին անյապաղ յունական կառավարութիւնը պատասխանից մի գրութեամբ, յայտնելով, որ Յունաստանը ընդունում է մեծ պետութիւնների վճիռը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՕՇՕՏՐՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից պ. ՆՈՒՐԻՆՕՎԻ և ընկ զեղերի ԽԱՆՈՒԹԻՒ և ՊԱՀԵՍՏ կը լինի ԽԱՏԱՐՕՎԻ տանը, Եաբուրովի տան Կին3, որտեղ գտնվում է նահանգական վարչութիւնը Մուգեսի դիմացը:

3—3

### ՄՕԶԴՕԲԻ

Հայոց օրիորդաց գպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻ նպաստաւոր պայմաններով: Ցանկացողները կարող են գնալ «ՄՇԱԿԻ» խմբագրատունը պայմանների մասին բանակցելու համար:

9—10

Համեմատելք անգլիական խանութի թէյից գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը2 բուլկանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

28—100

ՓՈՐՁԱՌՈՒ ՀԱՆՁԱՐԱՀ

Որ նորերումս է եկել, ցանկանում է տեղ ունենալ: Համաձայն է նոյնպես անցած տարիներից ետացած տարեկան ՀԱՆՁԱՐՆԵՐը կապել և թողած ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐը և ԲԱԼԱՆՍՆԵՐը կարգի բերել: Հասցէն թողնել Փարիզ հիւրանոցում № 4:

9—10

ԱՆԴԱՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օլէօգրաֆիական պատկերներ 20% զէշտամեզ. վերարկուներ 6—20 ր., խոզանակներ պաշվենիքներ և այլն մեծ առատութեամբ և աղքատ անգլիական խանութի համար, ամենալաւ ածկներ, արկղիկով 4 ր., նեղիլդի գանակներ 3—20 ր. գիւժիներ, բրիտանական մետալ թէյամաններ 30 կ.—3 ր., ցնարատաժգնեղիա, թիւրքական չերքեզ և ծարաբ Բագդադող նիւթ 70 կ., ամենալաւ օդորակ և խերու 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

ԳԵՐԱԶԱՆՑ ԱԼԻՒՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ

Պատատված մաքուր ցորենից առանց թեփի բերված է Կիսկից և ծախվում է Կուկիայում նոր բացված պահեստում, Երիւանական փողոց, տուն Գանանովի, Փոթիւ Թիֆլիսեան երկաթուղու վարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպես կիսկից բերած և Փոթիում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

5—5 (2)

**ՄԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ**, որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆՏՕՐՉԻԿԻ ԳԻՐՔԱԿԱՏՈՒԲԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:

### ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՅՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գաւթոնական կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօսխնեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգական և աչքերի հ., Շահմարօվի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգական հ., Վզօրօվ վիներական և բոցաղի հ., Իւլխանով աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կարապետովի, Լիսենկով և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսենկով Բուգմօվի ներքին հ., Շահմարօվի վիներական և կաշու հ., Ասատուրեանց կանանց և երեխաների հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Վզօրօվ վիներական և բոցաղի հ., Բօսխնեանց կանանց և երեխաների հ., Լիսենկով և Վերմիշեվ սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գաւթոնական կանանց հ., Մինկևիչ խիրուրգական հ., Կարապետովի և Լիսենկով ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շահմարօվի և Վերմիշեվ սեռական հ.:

Շաբաթ Լիսենկով և Վերմիշեվ ներքին հ., Բաքով կուրծքի հ., Եանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվճար ազգատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բարայեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւեհարոյժ Օրբելեան ազգատ հիւանդներին բժշկանոցի տանական ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դերեկտոր Լիսենկով:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Վրաստանատունցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ** ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄՈՆԵՆՑԻՑ:

**Ը. ՏԱՐԻ** նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

**Ր. ՏԱՐԻ** մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, առնողներին զեղջուն կը լինի: Մամուլ տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը բազաբական:

1—20

Ազէ-քանդրապօլու երկսեռ գպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ ատարած լինի որ և է բարձրագոյն գպրոցում, շաբաթական 24 դասով: Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ գպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձու՝ Սարգիս Միրզայեանց.
Հաատուր Խահակեանց.

Բազաբային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և բազաբային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպես առաջին, նոյնպես և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթական անդամ մի ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվին մկրտիական և ծաղկեր պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան գլխաւորական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները մեր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մտնելու համար նրանցից պահանջվում է. կրօնից-քրիստոնէական վարդապետութեան հրահանգները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարգացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուաբանութենից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, գրամի, հեռաւորի և այլ չափերի գիտենալը:

Ծուլիսի 1-ից վԱՐՇԱՎԱԿԱՑԱ ՊԵՏԱՐՆԵՒՑԻՆ կից կը բացվին ՍԵՆՆԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԻ, ՇՕՓՕԼԱՓ, ԹԵյ և պատրաստված հանքային զանազան ըմպելիք: 20—40

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զաւ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում Ընդհանուր աշխատհագրութեան, Ա. տարի, Նախագիտելիք (Տարիական դիւանի Թիֆլիս) 5 պատկերներով Աշխատասիրութիւն Ն. Սիմոնեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զեղջուն կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մասնաւորական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը ապրուելուց յետոյ կը հրատարակուին նոցա գները: Ամար քաղաքացիք գիմում են:

Въ Тифлисѣ. Кавказская книжная торговля З. П. Григорова.

20—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՈՒ

Հրացաններ, րեվոլվերներ, դանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, ապակի, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԴԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

18—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Дозволено Цензурою 7 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона